Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/1-Տ ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան 13 փետրվարի 2025թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սիմոնյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ասրյանը, Է. Բաղալյանը, Ն. Ավետյանը և Տ. Վարդանյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյան:

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/1-Տ ծածկագրով ընթացակարգի
մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերի
ուսումնասիրության արդյունքներ

07.02.2025թ. գնահատող հանձնաժողովի նիստում Ընկերությունների կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ.

Ուսումնասիրության արդյունքում.

«Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում ներկայացված հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են:

«Շին Քոնստրուկտ» ՍՊԸ կողմից ներկայացված շտկման փաստաթղթերում՝ «Մասնագիտական փորձառություն» Մասնակցի նմանատիպ փորձառություն հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել է ներհամայնքային նշանակության ճանապարհների փոսային նորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագիր և ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության պայմանագիր, որը նմանատիպ չէ ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/1-Տ ծածկագրով հրավերով պահանջվող աշխատանքներին այն է՝ «Նմանատիպ են համարվում հիդրոտեխնիկական կառուցվածքների կառուցման, կամ ամբողջական կամ մասնակի վերակառուցման, կամ ամբողջական կամ մասնակի ուժեղացման, կամ ամբողջական կամ մասնակի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ մատուցված ծառայությունը՝ հրավերով պահանջվող լիցենզիայի և ներդիրների շրջանակներում:»:

«ԴՎԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկման փաստաթղթերում՝ Լիցենզիայի ներդիրը չի համապատասխանում Հրավերով պահանջվող Լիցենզիայի ներդիրին («հիդրոտեխնիկական կառուցվածքներ (հիդրոտեխնիկական համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ)» ներդիրով (ներդիրի ծածկագիրը՝ 07):), բացակայում է Մասնակցի նմանատիպ փորձառությունը հիմնավորող ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/1-Տ ծածկագրով հրավերով պահանջվող փաստաթղթերը, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորելու համար առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունները (սխալ է լրացված՝ ներկայացված է այլ ընկերության անունով) չի համապատասխանում հրավերի պահանջներին:

«Դելտաշին» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժակետում ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/1-Տ ծածկագրով հրավերով պահանջվող նմանատիպ փորձառությունը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել հայտով և չեն շտկվել, չի շտկվել նաև Չափաբաժին 1-ի համար ներկայացված լիցենզիան:

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/1-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

«Շին Քոնստրուկտ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում նմանատիպ փորձառությունը հիմնավորող պայմանագրի գումարը Չափաբաժին 4-ի մասով չի համապատասխանում Հրավերի պայմաններին, այն է՝ պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, ինչպես նաև ներկայացված շտկման փաստաթղթերում՝ նմանատիպ փորձառությունը չի համապատասխանում ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/1-Տ ծածկագրով հրավերով պահանջվող աշխատանքներին: («**Շին Քոնստրուկտ» ՍՊԸ** կողմից Չափաբաժին 4-ի համար առաջարկել է 852 000 ՀՀ դրամ ներառյան ԱԱՀ-ն, որի

համար ընկերությունը նմանատիպ փորձառությունը հիմնավորելու նպատակով ներկայացված նախկինում կատարված պայմանագիրը գումարային արտահայտությամբ 304 000 ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ է:)

«ԴՎՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկման փաստաթղթերում Լիցենզիայի ներդիրը չի համապատասխանում Հրավերով պահանջվող Լիցենզիայի ներդիրին, բացակայում է Մասնակցի նմանատիպ փորձառությունը հիմնավորող փաստաթղթերը (Հայտով չի ներկայացվել և չի շտկվել), «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորելու համար առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունները (սխալ է լրացված) չի համապատասխանում հրավերի պահանջներին:

«Դելտաշին» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժակետում ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/1-Տ ծածկագրով հրավերով պահանջվող նմանատիպ փորձառությունը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել հայտով և անհամապատասխանությունների շտկման փուլում չեն շտկվել:

1. Հիմք ընդունելով հրավերի 8.10 կետը, այն է՝ «8.10 Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:» մերժել՝ «Շին Քոնստրուկտ» ՍՊԸ, «ԴՎՍ» ՍՊԸ-ի և «Դելտաշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

2. Չափաբաժին 1-ի, 3-ի մասով ընտրված մասնակից հայտարարել «Ռիջիդ» ՍՊԸ-ին,

3. Չափաբաժին 2-ի մասով ընտրված մասնակից հայտարարել «Գրիտիգ» ՍՊԸ -ին,

4. Չափաբաժին 5-ի մասով ընտրված մասնակից հայտարարել «Շին Քոնստրուկտ» ՍՊԸ-ին,

5. Չափաբաժին 6-ի մասով ընտրված մասնակից հայտարարել «Մոդուլ» ՍՊԸ-ին,

6. Չափաբաժին 4-ը հայտարարել չկայացած Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.):

7. Չափաբաժին 1-ի, 2-ի, 3-ի, 5-ի, 6-ի մասով հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

8. Չափաբաժին 1-ի, 2-ի, 3-ի, 5-ի, 6-ի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ		Ա. Սիմոնյան
անդամներ		Ս. Ասրյան
		Է. Բաղալյան
		Ն. Ավետյան
		Տ. Վարդանյան
Քարտուղար		Ա. Սարգսյան